INTERNATIONAL MONETARY FUND

COMMUNICATIONS DEPARTMENT

Press Release No. 18/112
FOR IMMEDIATE RELEASE
March 28, 2018

International Monetary Fund
Washington, D.C. 20431 USA

ԱՄՀ Հայաստան կատարած այցի եզրափակիչ հայտարարություն

Առաքելությունների այցը եզրափակող մամլո հաղորդագրությունները ներառում են ԱՄՀ աշխատակազմի թիմերի՝ երկիր կատարած այցից հետո նախնական եզրահանգումների մասին հայտարարությունները: Սույն հայտարարության մեջ արտահայտված տեսակետները ԱՄՀ աշխատակազմինն են և պարտադիր չէ, որ ներկայացնեն ԱՄՀ գործադիր խորհրդի տեսակետները:

- ԱՄՀ թիմը ողջունում է բարեփոխումների համապարփակ օրակարգ իրականացնելու կառավարության մտադրությունը, որին օժանդակում է 2017-2022 թվականների զարգացման ծրագիրը:
- Առաջընթաց է գրանցվել Հայաստանի քաղաքականության առաջնահերթությունների սահմանման ուղղությամբ: Առաջիկա ամիսներին կշարունակվեն ԱՄՀ թիմի հետ քննարկումները:

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) աշխատակազմի թիմը՝ պրն. Հոսեյն Սամիի ղեկավարությամբ, մարտի 14-28-ի ընթացքում այցելեց Երևան՝ Հայաստանի հետ ԱՄՀ հնարավոր նոր ծրագրի շուրջ նախնական քննարկումներ անցկացնելու նպատակով: Այցի ավարտին պրն. Սամիին հրապարակեց հետևյալ հայտարարությունը.

«Աշխատակազմի թիմը ողջունում է համապարփակ բարեփոխումների օրակարգ իրականացնելու կառավարության մտադրությունը, որին օժանդակում է 2017-22 թթ. զարգացման ծրագիրը: Օրակարգը համապատասխանաբար նպատակադրում է ավելի բարձր և ավելի ներառական աճի խթանումը: ԱՄՀ-ի օժանդակությամբ հնարավոր նոր ծրագիրը կօգնի կառավարությանը՝ իրագործելու միջին եկամտով դիվերսիֆիկացված տնտեսություն դառնալու Հայաստանի տեսլականը:

«Մենք արդյունավետ քննարկումներ անցկացրեցինք 2018 թ. մնացած ժամանակահատվածում և միջնաժամկետ հեռանկարում քաղաքականությունների և գործողությունների վերաբերյալ: Լավ առաջընթաց է գրանցվել բարեփոխումների առաջնահերթությունները և քաղաքականությունները բնորոշելու ուղղությամբ՝ մակրոտնտեսական և հարկաբյուջետային կայունության պահպանման համար: Քննարկումները կշարունակվեն առաջիկա ամիսներին:

«Այցի ընթացքում թիմը հանդիպել է վարչապետ Կարեն Կարապետյանի, փոխվարչապետ Վաչե Գաբրիելյանի, Ֆինանսների նախարար Վարդան Արամյանի, Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանի, Տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանի, Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Վարդան Հարությունյանի, ինչպես նաև այլ բարձրաստիճան պետական պաշտոնյաների, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և միջազգային համայնքի ներկայացուցիչների հետ: Թիմը շնորհակալություն է հայտնում իշխանություններին՝ համագործակցության և հյուրընկալության համար»: